1922

ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր,
Ո՞ւրկից եկել,
Ո՞ւր ես թեքել,
Ո՞ւր ես ճեպում էդքան հրզոր,
5 Անճառ թափով,
Անծեր ճամփով,
Դարե՛ր, դարե՛ր հազարավոր։

Սիրիո՛ւս, երկնից շրքեղ գոհար,
Որ խաղում ես,
10 Փաղփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ
Ու զարդարում,
Ջրվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ –

15 Ինչքան աչք են վրրադ հառել,
Նայում են քեզ
Հիմի մեզ պես,
Ինչքան աչք է նայել, մարել,
Եվ կամ ինչքան
20 Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել։

Ո՞վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,
Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ
Մի օր հատնի,
Մարի, մըթնի
Հըրաժեշտի շողըդ հավետ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին.
Եվ թե տեսնես՝
Մեզնից էսպես
Մի հարցում տուր հըզոր մահին.
– Մարդու քանի՞
Սերունդ կանի
Մի հըրաժեշտն աստեղային։